"НАЦИОНАЛЬНЫЙ АКАДЕМИЧЕСКИЙ ТЕАТР ОПЕРЫ И БАЛЕТА им. А.СПЕНДИАРЯНА"
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ

ALEXANDER SPENDIARIAN OPERA AND BALLET NATIONAL ACADEMIC THEATRE, NON-COMMERCIAL STATE ORGANIZATION

«Ա.ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

N 127-Լ

«06» փետրվարի 2023 թ.
ք. Երևան

«Ա. ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՐԳՉԱԽՄԲԻ ԱՐՏԻՍՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ, ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԹԱՏՐՈՆԻ ՏՆՕՐԵՆԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N 191-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 88-րդ հոդվածով և 120-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մայիսի 22-ի թիվ 652-Ա հրամանով հաստատված «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 25-րդ կետի 12-րդ ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ մշակույթի նախարարի 2009 թվականի հունվարի 29-ի N 707-Ա և «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Թատրոն) տնօրենի 2014 թվականի ապրիլի 30-ի N 134-Ա և 2014 թվականի ապրիլի 30-ի N 136-Ա հրամանների պահանջները, ինչպես նաև նպատակ ունենալով բարձրացնել երգչախմբի արտիստների որակական մակարդակը՝

հրամայում եմ.

1. 2023 թվականի մարտի 17-ին և 18-ին անցկացնել Թատրոնի երգչախմբի արտիստների մասնագիտական որակավորման քննություն՝ երգչախմբի արտիստների զբաղեցրած պաշտոնին կամ աշխատանքին՝ մասնագիտական ունակությունների համապատասխանության գնահատում, այսուհետ՝ մասնագիտական որակավորման քննություն:

2. Հաստատել Թատրոնի երգչախմբի արտիստների մասնագիտական որակավորման քննությունների անցկացման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

3. Սահմանել, որ մասնագիտական որակավորման քննություններն անց են կացվելու «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ

առևտրային կազմակերպության տնօրենի 2014 թվականի ապրիլի 30-ի N 134-Ա և 2014 թվականի ապրիլի 30-ի N 136-Ա հրամաններով սահմանված ընթացակարգերով:

4. Թատրոնի երգչախմբի ղեկավարին՝ ապահովել սույն հրամանի և «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2014 թվականի ապրիլի 30-ի N 134-Ա և 2014 թվականի ապրիլի 30-ի N 136-Ա հրամանների պատշաճ իրազեկումը երգչախմբի արտիստներին:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել Թատրոնի ընդհանուր կառավարման հարցերի գծով տնօրենի տեղակալ Հրաչ Գրիգորյանի վրա:

6. Ուժը կորցրած ճանաչել Թատրոնի 2020 թվականի փետրվարի 12-ի «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գեղարվեստաստեղծագործական անձնակազմի արտահերթ մասնագիտական որակավորման քննությունների անցկացման և արտահերթ որակավորման քննությունների անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին» N 191-Ա հրամանը:

7. Թատրոնի հասարակայնության, հանդիսատեսի հետ կապերի և մարքեթինգի բաժնին՝ սույն հրամանը հրապարակել Թատրոնի պաշտոնական ինտերնետային կայքէջում առանձին բաժնում՝ նշելով ակտի հրապարակման օրը:

8. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում Թատրոնի պաշտոնական ինտերնետային կայքէջում հրապարակմանը հաջորդող օրը:

ARMENIAN
NATIONAL OPERA
AND BALLET THEATRE

Թատրոնի տնօրենի
ժամանակավոր պաշտոնակատար՝ **Կ. Դուրգարյան**

ք. Երևան
«06» փետրվարի 2023 թ.